ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Youth

CENN
Shaping the Future by Changing Today

Green lane

Austrian Development Agency

# ՆԵՐԱՌԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Youth

Austrian Development Agency

# Ներառական գյուղական հասարակություն

Երևան, 2021

ՀՏԴ 338.43
ԳՄԴ 65.32
Մ 806

Սույն հրատարակությունը տպագրվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից համաֆինանսավորվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում:

Հեղինակներ՝
Անժելա Մկրտչյան
Լուսինե Մաթևոսյան

Խմբագիրներ՝
Էմիլ Գևորգյան
Գայանե Աթոյան

Մկրտչյան Ա.
Մ 806 Ներառական գյուղական հասարակություն / Ա. Մկրտչյան, Լ. Մաթևոսյան.- Եր.: ԶարտՊրինտ, 2021.- 64 էջ:

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում Ավստրիական զարգացման գործակալությունը (ԱԶԳ), ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, «Կանաչ արահետ» ՀԿ-ն, CENN-ը և հեղինակները սույնով իրենց համաձայնությունն են տալիս ընթերցողին սույն ձեռնարկը բացառապես ոչ առևտրային նպատակով, կայուն գյուղատնտեսության մասնագետների շարունակական վերապատրաստման նպատակով օգտագործելու համար:

*Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները և, պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները:*

ՀՏԴ 504.062
ԳՄԴ 20.18

ISBN 978-9939-9185-9-4
© «ԶարտՊրինտ» ՍՊԸ, 2021
© Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2021
© Ավստրիական զարգացման գործակալություն, 2021
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Արտոնագիր՝ Եվրոպական միություն

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Youth

Ծրագրի դրոշը

# Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ֆրիկի փող. 21, Երևան 0002, Հայաստան
+374 (10) 54 64 94
+374 (10) 54 64 95
Delegation-Armenia@eeas.europa.eu
https://eeas.europa.eu/delegations/armenia_en

Austrian
Development
Agency

## Ավստրիական զարգացման գործակալություն

Ավստրիայի կառավարության աջակցությունը Հայաստանին սկսվել է 1988թ. ավերիչ երկրաշարժից հետո՝ մարդասիրական օգնություն ցուցաբերելով: 2011-ից ի վեր Հայաստանն Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) թիրախային երկրներից է: Համագործակցությունն ուղղված է գյուղատնտեսության զարգացմանը, նպատակ ունի խթանելու տնտեսական գործունեությունն ընդհանուր պայմանների բարելավման միջոցով և նպաստելու գյուղատնտեսական արտադրության արդիականացմանն ու վերելքին նոու-հաուի փոխանցման միջոցով: ԱԶՀ-ի գործառնական բաժինը Ավստրիական զարգացման գործակալությունն է, որի հիմնական ուղղություններից է գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացումը՝ վերջնական նպատակ ունենալով կրճատել աղքատությունը և նպաստել բնակչության եկամուտների աճին: Ծրագրերն իրականացվում են կարողությունների զարգացման և առաջադեմ փորձի («նոու-հաու») փոխանակման միջոցով:

Ցելինկագասսե 2 1010,
Վիեննա, Ավստրիա
+43 1 90399-0
office@ada.gv.at
www.entwicklung.at

*Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ*
Վ. Սարգսյան 26/1, 0010, Երևան, Հայաստան
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն
+ 374 60 654 654
jerewan@ada.gv.at

# ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (EU-GAIA)

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU-GAIA ծրագիրը) ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից (9,7 միլիոն եվրո) և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության (2 միլիոն եվրո) կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից: Ծրագրի կառավարության գործընկերն է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը: EU-GAIA ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում՝ Շիրակում, Լոռիում և Տավուշում: Ծրագրի տևողությունն է՝ 42 ամիս:
Ծրագիրը մեկնարկել է 2019թ.-ի հոկտեմբերին:

Էրեբունի Պլազա բիզնես կենտրոնի 7-րդ հարկ, սենյակներ 712-716
Վ. Սարգսյան 26/1, 0010, Երևան, Հայաստան
+374 60 655 955
gaia@ada.gv.at
European Union-GAIA Armenia

# Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (ՀԱԱՀ) Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որը որակավորում է գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտի մասնագետների և այդպիսով՝ ռազմավարական դերակատարություն ունի երկրի տնտեսական զարգացման գործում: ՀԱԱՀ առաքելությունն է Հայաստանում և տարածաշրջանում առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ագրոտեխնոլոգիական գերազանցության կենտրոն դառնալը: ՀԱԱՀ-ն ապահովում է որակյալ ուսումնական ծրագրերի լայն շրջանակ և իր առաքելությունն իրականացնում է կրթական, ակադեմիական և հետազոտական ծրագրերի միջոցով: Համագործակցելով գյուղատնտեսության ոլորտի դերակատարների, ինչպես նաև քաղաքականություն մշակող և իրականացնող հաստատությունների ու միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀԱԱՀ-ն ակտիվորեն ներգրավված է ՀՀ գյուղատնտեսական նորարարական համակարգերի մշակման գործընթացում:

Տերյան 74, Երևան 0009, ՀՀ
+374 10 52 45 41
info@anau.am
https://anau.am/

## Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպություն

«Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2004 թվականին:
Կազմակերպության նպատակն է աջակցել կայուն գյուղատնտեսության զարգացմանը ՀՀ բոլոր մարզերում:

Հերացու 24/1, Երևան 0025, ՀՀ
+374 10 57 57 79, 57 59 95
office@greenlane.am
www.greenlane.am

Caucasus Environmental NGO Network

## Կովկասի բնապահպանական կազմակերպությունների ցանց – CENN

CENN-ը (հիմնադրվել է 1998 թվականին) հասարակական կազմակերպություն է, որը աշխատում է շրջակա միջավայրը պաշտպանելու ուղղությամբ՝ խթանելով կայուն զարգացումը ամբողջ Հարավային Կովկասում:

CENN-ը մասնագիտացված է մի շարք ոլորտներում՝ պայքար կլիմայի փոփոխության դեմ, ռեսուրսների կայուն կառավարում, առողջ և բարեկեցիկ կլիմայակայուն համայնքների կառուցում և զարգացում, ինչպես նաև կանանց և աղջիկների հզորացում:

Բեթլեմի 27, Թբիլիսի 0105, Վրաստան
+995 032 275 19 03
info@cenn.org
http://www.cenn.org/

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Ներածություն** ..... 11

**Քուիզ** ..... 12

**Մաս 1.** Գյուղը և գյուղական համայնքը ..... 16

**Մաս 2.** Գյուղը հայկական ավանդական մշակույթի պահպանման խորհրդանիշն է ..... 22

**Մաս 3.** Կնոջ դերը գյուղի և քաղաքի համակեցության կազմակերպման տեսանկյունից ..... 31

**Մաս 4.** Միգրացիան հայկական գյուղական համայնքներում ..... 36

**Մաս 5.** Ուրբանիզացիայի առաջացրած սոցիալական խնդիրները գյուղերում ..... 42

**Մաս 6.** Առողջ շրջակա միջավայր. COVID-19-ի ազդեցությունը գյուղի սոցիալական վիճակի վրա ..... 46

**Մաս 7.** Գյուղական հասարակության դերը գյուղական տարածքների կայուն զարգացման գործում ..... 52

**Մաս 8.** Ավանդույթն ու կարծրատիպը՝ ինքնարտահայտման խոչընդոտ ..... 56

**Մաս 9.** «Անկախության սերունդը»՝ որպես գյուղի զարգացման առաջամարտիկ ..... 62

**Քուիզի պատասխանները** ..... 64

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ձեռնարկը նախատեսված է գյուղական սոցիոլոգիայով զբաղվողների համար: Նպատակն է ներկայացնել գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների սոցիալ-մշակութային արժեքային համակարգը, գյուղատնտեսության կայուն զարգացման համատեքստում վեր հանել գյուղական հասարակության դերը հայկական մշակույթի պահպանման գործում, ինչպես նաև միգրացիայի, ուրբանիզացիայի և այլ սոցիալական փոփոխությունների ու տեղաշարժերի ազդեցությունը ժամանակակից գյուղի զարգացման վրա:

# ՔՈՒԻԶ

Ստորև ներկայացված հարցումը՝ քուիզը[1], ստուգում է ընթերցողի ընդհանուր պատկերացումները արդի գյուղատնտեսության մասին:

1. **Արդյունաբերական գյուղատնտեսությունը հաճախ անվանում են «բարձր ներդրում», քանի որ դրա համար պահանջվում են մեծ քանակությամբ.**
   ա) թունաքիմիկատներ
   բ) պարարտանյութեր
   գ) հանքահումքային վառելիք
   դ) բոլորը միասին

2. **Սննդի արդյունաբերության մեջ անապահովության հիմնական պատճառն է.**
   ա) աղքատությունը
   բ) կլիմայի փոփոխությունը
   գ) կոռուպցիան
   դ) հողի աղակալումը

1. Քուիզի պատասխանները կարող եք գտնել ձեռնարկի վերջում:

3. **Ստորև բերվածներից ո՞րն է «կանաչ հեղափոխության» հիմնական բնութագրումը.**

ա) օրգանական պարարտանյութերի օգտագործումը

բ) կալորիականության, ճարպի և մանրաթելի պարունակության մասին տեղեկության ավելացում սննդի մակնշման մեջ

գ) բարձր բերքատվությամբ մշակաբույսերի նոր շտամների զարգացում

դ) անտառահատումներ՝ բերքը արևի լրացուցիչ լույսով ապահովելու համար

4. **Ավանդական ֆերմերները միևնույն հողամասում մի քանի բերք են աճեցնում: Ընդունված է պրակտիկայում դա անվանել.**

ա) մենամշակույթ

բ) բազմամշակույթ

գ) ջրագործություն

դ) կտրատել և այրել

5. **Չոր կլիմայական պայմաններում ոռոգվող ջրի կրկնակի կիրառումը հանգեցնում է.**

ա) հողի արտադրողականության անկմանը ավելի քան 10%-ով՝ հանգեցնելով անապատացման

բ) հողում աղերի կուտակման, ինչը հանգեցնում է աղակալման

գ) սննդանյութերի կուտակման, ինչը հանգեցնում է էրոզիայի մակարդակի բարձրացման

դ) ֆոսֆորի և ազոտի նվազման՝ հանգեցնելով էվտրոֆիկացման

6. **Սինթետիկ պարարտանյութերի օգտագործումը կարող է բարձրացնել բերքատվությունը, բայց նաև.**
   ա) ոչնչացնել հողի մեջ նիտրացնող բակտերիաները
   բ) ավելացնել սննդանյութերի արտահոսքը դեպի մոտակա մակերևութային ջրեր
   գ) դանդաղեցնել օրգանական սննդանյութերի արտանետումը պարարտանյութից
   դ) ավելացնել մոտակա հոսանքներում ձկների պոպուլյացիան

7. **Կենդանիների կենտրոնացված կերերի օգտագործումը լավագույնս կարելի է բնութագրել որպես.**
   ա) ավելի շատ հողատարածքներ ընդգրկելու գործառույթ անասնապահության համար
   բ) փորձ՝ հակաբիոտիկների արդյունավետությունը ստուգելու համար
   գ) հացահատիկի պահուստը՝ որպես սննդային հավելում բարելավելու համար
   դ) մեծ թվով անասունների արտադրում՝ սահմանափակ տարածքներում

8. **Նշվածներից որո՞նք են գյուղատնտեսության վնասակար հետևանքները.**
   ա) ջրիմուռը ծաղկում է պարարտանյութերի արտահոսքի պատճառով
   բ) կլիմայի փոփոխություն՝ կապված անասուններից և բրնձի պահոցներից մեթանի արտանետումների հետ
   գ) թունաքիմիկատների մնացորդներ սննդի մեջ, ջրում և օդում
   դ) վերոհիշյալ բոլորը

**9. Ստորև նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմը (ԳՄՕ).**

ա) օրգանիզմ, որն ընտրովի կերպով բուծվել է լավագույն հատկությունների համար

գ) օրգանիզմ, որ արտադրվում է մուտագենի ազդեցության արդյունքում

բ) օրգանիզմ, որը պարունակում է օտար ԴՆԹ

դ) օրգանիզմ, որը կլոնավորվել է

**10. Ստորև նշվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում անապատացման գործընթացը.**

ա) 10%-ից ավելի հողի արտադրողականության անկում

գ) տեղի է ունենում չոր կամ կիսաչոր տարածքներում

բ) առաջացած գերարածեցման և հողի էրոզիայի պատճառով

դ) վերոհիշյալ բոլորը

**11. Թվարկվածներից ո՞րը օրգանական գյուղատնտեսության առանցքային բաղադրիչ չէ.**

ա) գենետիկորեն մոդիֆիկացված սերմերի օգտագործումը

բ) գոմաղբը որպես պարարտանյութ կիրառելը

գ) վնասատուների ինտեգրված կառավարումը

դ) մշակաբույսերի ռոտացիան

**12. Էրոզիայի երկու հիմնական գործոններն են.**

ա) քամին և հոսող ջուրը

բ) ինքնահոս ջուրը և արևային ճառագայթումը

գ) թթվածինը և ջուրը

դ) ածխաթթու գազը և քամին

# ԳՅՈՒՂԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ:

### Հարցեր մտորելու համար

- Ինչպիսի՞ն են ձեր պատկերացումները գյուղի վերաբերյալ[2]:
- Երբևէ մտածե՞լ եք, թե ի՞նչ գործառույթներ ունեն գյուղական համայնքները:

## Ա. ԳՅՈՒՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ Բրոդելի՝ գյուղի ընդհանուր նկարագրություն չի կարող լինել. յուրաքանչյուր գյուղ իր տարբերակիչ հատկանիշներն ունի: Առաջինը ընդհանուր զբաղվածության բնույթն է, օրինակ՝ անասնապահությունը, խաղողագործությունը

2. Մտորելու հարցերի պատասխանները կարող եք գտնել յուրաքանչյուր վերնագրի համապատասխան տեքստում:

և այլն[3]:

Խոսքն այն հիմնական գործունեության մասին է, որն ընկած է գյուղի կենսապահովման հիմքում՝ պայմանավորված նաև աշխարհագրական դիրքով և կլիմայական յուրահատկությամբ: Տարբերակման հիմքում ընկած հաջորդ հատկանիշը ճարտարապետական ավանդույթներն են: Պատմության ընթացքում հանդիպում են որոշակի օրինաչափությամբ կառուցված գյուղեր, որոնցում, օրինակ՝ տները դեպի վեր են տարածվում կամ կառուցվում են փողոցի ծայրին:

Տարբեր գյուղերում բնակչության տեղաբաշխումը յուրահատուկ է: Գերմանացի պատմաբան Կարլ Լամպրեխտին առաջ է քաշում գյուղերի համակարգ և ագարակների համակարգ հակադրությունը: Այս տարանջատումը պայմանավորված է կառուցապատման առանձնահատկություններով՝ գյուղերը շրջապատված են տներով, իսկ ագարակները կենտրոն չունեն: Մովսես Խորենացին հավաստում է, որ դեռևս հայոց Արտաշես թագավորը կարգադրել է որոշել գյուղերի սահմանները և առանձին նշաններով (սահմանաքարերով) դրանք բաժանել ագարակներից[4]:

Էական նշանակություն ունեն ճանապարհները, որոնք նպաստում են որոշ տեղերում տների և բնակչության խիտ տեղայնացմանը, իսկ մյուս տեղերում՝ դրանք իրարից և կենտրոնից շատ հեռու գտնվելուն: Այն գյուղերում, որտեղ դպրոցը, եկեղեցին, գյուղապետարանը գտնվում են տարբեր հատվածներում, համայնքը իր գործառույթը բավականին բարդ

3. Վերմիշյան Հ.Ռ., Բալասանյան Ս.Ս., Գրիգորյան Օ.Գ., Քերոբյան Ս.Ն. Լոկալ ինքնությունները Երևանում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 158 էջ + 1 էջ ներդիր:

4. Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1977, հ. 3, էջ 115:

է իրականացնում: Առհասարակ, եթե հաշվի չառնվի գյուղի ձևը, այլ միայն գործառույթը, տարբերությունները այդքան էլ էական չեն կարող լինել:

Այսօր գյուղի՝ որպես ուրույն սոցիալական համակարգի յուրահատկությունների պահպանման և ընդգծման հիմնահարցը արդիական է հատկապես Հայաստանի պես մեծաթիվ գյուղական համայնքներ ունեցող երկրում: Նման տարբերակիչ յուրահատկությունների համակարգը Ի. Վալերշտեյնը կոչում է ***գեոմշակույթ***: Գեոմշակույթի տարրերի առանձնահատկությունների ուսումնասիրման համար անհրաժեշտ է տալ գյուղի օպերացիոնալ սահմանումը՝ գյուղը տարբերակելով ըստ երեք հիմնարար բաղադրիչների՝ **հողի, ընտանիքի և համայնքի** փոխկապվածության: Գյուղի՝ որպես ուրույն սոցիալական համակարգի ինքնավերարտադրության գործընթացում հողը ամենանշանակալի և շոշափելի կապիտալն է: Գյուղացի (գյուղական ընտանիք) - գյուղ (գյուղական համայնք) փոխհարաբերությունների ամրապնդումը հնարավոր է «գյուղացի-հող» օբյեկտիվ և խորհրդանշական փոխհարաբերության ամրապնդման ճանապարհով[5]:

5. Մկրտիչյան Ա.Ե., Շահնազարյան Գ.Ն., Սահակյան Ա.Կ., Վարտիկյան Ա.Ռ., Վերմիշյան Հ.Ռ. Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:

## Բ. ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լ.Մամֆորդը ընդգծում է, որ գյուղերում դրված են կենցաղի կազմակերպման, համատեղ գոյության հիմքերը: Գյուղն իր մեջ ներառում է մի քանի ոչ մեծ ընտանեկան խմբեր և ունի իր ավանդույթները, բոլորը խոսում են նույն լեզվով, ունեն հավաքատեղիներ:

Մարդկանց փոխհարաբերությունների արդյունքում ձևավորվում է սոցիումի որևէ տեսակ՝ խումբ, համայնք կամ ցանկացած այլ միավորում, որը գործում է որպես մեկ ամբողջ թե՛ իր ներսում, թե՛ առհասարակ: Այդ փոխհարաբերությունները կարող են լինել իրական և օրգանական, ինչպիսին է **համայնքը**, կամ իդեալական և մեխանիկական, ինչպիսին է **հասարակությունը**: Համայնքում որոշումների կայացումը համընդհանուր համաձայնության միջոցով է կայանում, ինչը բնորոշ է գյուղերին, մինչդեռ հասարակությունը շատ ավելի լայն միավորում է, որը բաղկացած է ամենատարբեր համայնքների տիպերից, և այնտեղ, բնական է, անհնար է կայացնել որոշումներ այնպես, ինչպես բնորոշ է համայնքներին:

Այսպիսով՝ համայնքում առկա է օրգանական, իրական կազմակերպված կյանքի զգացում, իսկ հասարակությունը հիմնված է կոնֆլիկտային և էգոիստական ցանկությունների վրա:

Համայնքում սոցիալական կամքը դրսևորվում է միաձայնության, սովորույթների և կրոնի միջոցով, իսկ հասարակությունում՝ պայմանագրի, քաղաքականության և հասարակական կարծիքի: Համայնքում փոխհարաբերությունները կարգավորվում են նորմերի, կրոնի, ավանդույթների գերակայությամբ, իսկ հասարակությունում՝ օրենքների[6]:

Գյուղական համայնքները աչքի են ընկնում արդյունաբերականացման բացակայությամբ, չնայած առաջխաղացում կա տեխնիկայի առումով: Գյուղական համայնքները այս առումով օրինված են, քանի որ նրանք դեռ կարող են շնչել մաքուր և բնական օդ: Գյուղական համայնքներում կյանքը հանգիստ է, իսկ մարդիկ ավելի շատ ժամանակ ունեն ժամանցի կազմակերպման համար և, կարծես, ավելի շատ վայելում են բնությունը, քան քաղաքային համայնքները: Գյուղական համայնքները ստանում են համեմատաբար մաքուր կաթնամթերք և սննդի այլ ապրանքներ, ինչպիսիք են բանջարեղենը և մրգերը, մինչդեռ քաղաքային համայնքների համար աղտոտման հավանականությունը շատ ավելի մեծ է:
Այս ամենը արտացոլված է գյուղական համայնքների ավելի լավ առողջության և պիտանիության մեջ, քան քաղաքային համայնքները:

6. Վերմիշյան Հ.Ռ., Բալասանյան Ս.Ս., Գրիգորյան Օ.Գ., Քերոբյան Ս.Ն. Լոկալ ինքնությունները Երևանում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 158 էջ + 1 էջ ներդիր

## Հետաքրքիր մտքեր...

«...Միայն այն պարագայում, երբ գյուղը մեռնում է մեր մեջ, մենք հասկանում ենք՝ ինչքան մեծ է մեր պարտքը գյուղին, ինչքան շատ բանով ենք մենք պարտական դրան, և որքան կարևոր են դրա կենսական էներգիան և ոգին քաղաքների համար»:

***Մամֆորդ***

# ԳՅՈՒՂԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է[7]

### Հարցեր մտորելու համար

- Ինչո՞ւ են գյուղերում առավել լավ պահպանվում ավանդույթները:
- Արդյոք Հայաստանում բոլո՞ր գյուղերն ունեն նույն ավանդույթները:

## Ա. ԳՅՈՒՂԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԿՐՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

Գյուղական համայնքներում սոցիալական կառուցվածքը պահպանվում է ընտանեկան ասքերի, հերոսների օրինակների, բարոյական արգելքների միջոցով: Այն փոխանցվում է սերնդեսերունդ՝ չփոխելով իր էությունը:

Որպես մշակույթը կրողի՝ յուրաքանչյուր գյուղ ունի իր դրվածքը, համայնքը, համատեղ սեփականությունը, ասացվածքները, երգերը, պարերը և այլն: Անգամ ընդունված է

7. Մկրտիչյան Ա.Ե., Շահնազարյան Գ.Ն., Սահակյան Ա.Կ., Վարտիկյան Ա.Ռ., Վերմիշյան Հ.Ռ. Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:

ծիծաղել հարևանների յուրահատկությունների վրա, ինչը փաստում է, որ յուրաքանչյուր գյուղացի ունի իր փոքր հայրենիքը՝ իր բոլոր սահմանափակումներով:

Հայկական մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Այն ներառում է գիտությունը, արվեստը, արհեստը և, առհասարակ, մարդու ստեղծած ամեն ինչ: Դրանք մեզ ծանոթ են ոչ միայն պահպանված առասպելներից, կրոնական հավատալիքներից, այլև պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոներից: Հայ մշակույթի ակունքները գալիս են դեռևս տոհմացեղային շրջանից և հայկական ցեղային միությունների ու պետական կազմավորումների ժամանակներից:

Իսկ ինչպիսի՞ դեր և սոցիալական նշանակություն է պատմականորեն ունեցել գյուղը ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և տարածման գործընթացում:

Կա վարկած, համաձայն որի գյուղը՝ որպես համայնական արժեքներ կրող ու պահպանող սոցիալական միավոր, հանդես է գալիս ազգային ինքնության ավանդական տարրեր վերարտադրող մեխանիզմի դերում: Իսկապես, ավանդական հասարակություններին վերագրվող *ի ծնե ստատուսի, անձնավորված փոխհարաբերությունների,*

*աֆեկտիվ կապերի, կոլեկտիվ գիտակցության և կայուն պարզ արժեքների* առաջնայնությունը պատմականորեն բնորոշ է եղել գյուղական համայնքներին՝ ի հակադրություն քաղաքը բնորոշող *ձեռքբերովի ստատուսի, անդեմ փոխհարաբերությունների, աֆեկտիվ չեզոք կապերի և ոչ հաստատուն բարդ արժեքների առաջնայնության:* Այս տեսանկյունից հիմնավոր է դառնում վերոնշյալ վարկածը՝ գյուղին վերագրելով ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և պահպանման դերը:

Արդիականացման և համաշխարհայնացման ներկայիս գործընթացները և դրանց շրջանակներում տեղի ունեցող սոցիալական փոփոխություններն ու տեղաշարժերը, համաձայն սոցիոլոգիական արդի մոտեցումների, օբյեկտիվորեն նպաստում են ավանդական/համայնականի վերափոխմանն ու փոխարինմանը:

Այս տեսանկյունից հասարակության յուրահատկությունները, այլ հասարակություններից նրան տարբերակող հատկանիշները ամրագրված են հենց ազգային ավանդական կերպարում, որի կրողն է, ինչպես արդեն նկատեցինք, «գյուղը»՝ որպես սոցիալական յուրատեսակ համակարգ: Գյուղի և գյուղական համայնքի ներկայիս ավանդական կերպարի փոխակերպման առանձնահատկությունները մասնավորապես կարելի է տեսնել գյուղում ավանդական-մշակութային/կրոնական պրակտիկաների վերարտադրության համատեքստում:

Գյուղի, գյուղական համայնքի՝ որպես ավանդական ինքնություն վերարտադրող մեխանիզմի կառուցվածքային փո-

փոխությունները հանգեցրել են նաև գյուղական առօրյայի փոփոխմանը: Ավանդական գյուղական համայնքին բնորոշ հողագործական, անասնապահական կենսակերպի վերափոխման, հարևանի ինստիտուտի անկման, ինչպես նաև քաղաքի և քաղաքային մշակույթի արժևորման ֆոնին արդի հայկական գյուղերում փոփոխվում են նաև ավանդույթների, ծեսերի, կրոնականության վերարտադրության մեխանիզմները, վերաիմաստավորվում են պրակտիկաները, ու նվազում են լոյալությունը, ավանդույթները կրոնականությունը վերարտադրող սուբյեկտների նկատմամբ:

Ինքնության ավանդական տարրերի վերարտադրության գործընթացում կենտրոնական են ազգային ավանդույթների և կրոնական պրակտիկաների՝ որպես ավանդական ինքնության միջուկի դերն ու նշանակությունը: Ինչպես երևում է առկա վերլուծությունից, արդի հայաստանյան գյուղում նկատելի է ընտանեկան լոկալացման և պարփակման միտումը:

Ավանդական գյուղին բնորոշ համայնական համատեղ կենսակերպը փոխարինվում է ընտանեկան շրջանակներով: Հասարակական կազմակերպման հանրային ձևաչափը հաճախ փոխարինվում է լոկալ-խմբային կամ անհատական դրսևորումներով: Սոցիոլոգիական հարցման արդյունքներից երևում է, որ հայաստանյան արդի գյուղերում կազմակերպվող բարեկամական, ընկերական տարբեր հանդիպումներին, ծեսերին, խնջույքներին և արարողություններին գյուղաբնակների 16%-ը հազվադեպ է մասնակցում, իսկ 12%-ը գրեթե երբեք չի մասնակցում, ինչը գյուղական ավանդական

համայնքի այլափոխվող կերպարի նշանակալի ցուցանիշ է[8]: Համաձայն սոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ հայաստանյան գյուղերում որպես կոլեկտիվ ավանդական միջոցառումներ, որոնց մասնակցում են գյուղաբնակները, առանձնացվում են հարսանիքներն ու թաղման արարողությունները, տոնակատարություններից՝ հատկապես Ամանորը, իսկ որպես ավանդական/կրոնական տոն՝ Տյառնընդառաջը, Զատիկը և Վարդավառը:

## Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ[9]

### 1. Հաց կիսելու ավանդույթ

Եթե հյուր եք եկել ու մոլորվել եք, հանգիստ ցանկացած դուռ թակեք: Ձեզ սիրով կդիմավորեն, կկերակրեն, կխմեցնեն ու կճանապարհեն՝ ուր պետք է: Հաց կիսելու ավանդույթները շատ հնուց են գալիս: Առաջներում լավաշ թխելիս ընդունված էր առաջին բաժինը անցորդներին հյուրասիրել: Այս ավանդույթը որոշ գյուղերում պահպանվել է մինչ օրս: Նույնն արվում էր խնջույքների, հատկապես՝ տոների ժամանակ. տաք կերակուրից աղքատներին էլ էին բաժանում:

Յուրաքանչյուր ժողովրդի խոհանոց յուրահատուկ է: Հայկական խոհանոցի գաղտնիքը հացահատիկի պաշտա-

8. Մկրտիչյան Ա.Ե., Շահնազարյան Գ.Ն., Սահակյան Ա.Կ., Վարտիկյան Ա.Ռ., Վերմիշյան Հ.Ռ. Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:

9. https://armeniasputnik.am/armenia/20190331/17886781/gluxlvayic-minchev-atamhatik-kam-inchpesen-hayery-pahpanel-hin-avanduytnery.html

մունքն է, որը գոյություն է ունեցել հեթանոսական ժամանակներից: Հայերը դեռ հնուց ուտեստներ են պատրաստել հացահատիկից, ընդեղենից: Նրանք հավատում էին՝ որքան շատ հացահատիկ զոհաբերեն աստվածներին, հատկապես՝ տոների ժամանակ, այդքան ավելի հարուստ և առատ կլինի բերքը: Ի դեպ, Հայաստանում հացը պաշտելու ավանդույթ կա: Հացը աղբ նետելը մեղք է: Բացի այդ, հայերը պահպանել են նաև գառ կամ աքլոր մատաղ անելու ու աղքատներին բաժանելու ավանդույթը:

## 2. Հարսանեկան ավանդույթներ

Հայաստանում ընդունված է հարսի հետևից նրա հորական տուն գնալ ու նրան հանել ուրախ երաժշտության ներքո պարելով: Հին ավանդույթի համաձայն, որն այսօր հիմնականում գյուղերում է պահպանվել, հարսանեկան արարողության հաջորդ օրը փեսայի բարեկամուհիները գալիս են հարսի հորական տուն, կարմիր խնձորով զամբյուղ են բերում, որն անմեղության ու մաքրության նշան է: Ըստ հայկական ավանդույթի՝ հարսի ծնողները տեսնում են նրան հարսանիքից միայն մեկ

շաբաթ անց, այդ օրը կոչվում է գլուխլվա: Նախկինում ընդունված էր այդ օրը նորապսակ հարսի օժիտը բերել:

### 3. Երեխայի ծնվելու հետ կապված ավանդույթներ

Երեխայի ծնունդը աշխարհի բոլոր ժողովուրդների համար տոն է: Հայաստանում դրա հետ կապված մի քանի սովորույթ կա: Առաջինը քառասունքն է. քառասուն օրվա ընթացքում չի կարելի երեխային ցույց տալ օտարներին: Այդ սովորույթի կողմնակիցները կարծում են՝ ժամանակ է պետք, որ երեխայի օրգանիզմը ամրանա, ու ոչ ոք չկարողանա աչքով տալ նրան:

Ի դեպ, հայերը նաև երեխաներին տատերի ու պապերի անունով կոչելու ավանդույթն են պահպանել: Համարվում է, որ դա հարգանքի տուրք է մեծերին: Նախկինում ընդունված էր խնջույքով տոնել երեխայի ծնունդը տան բակում: Հիմա այդ ավանդույթը գրեթե չի պահպանվել: Բուն հայկական կարելի է անվանել ատամնահատիկի ավանդույթը, որը տոնում են երեխայի առաջին ատամի ի հայտ գալու հետ: Այդ տոնին հրավիրում են ազգականներին ու մտերիմներին, երեխայի շուրջ տարբեր մասնագիտությունները խորհրդանշող իրեր են դասավորում: Համարվում է, որ երեխայի ընտրած առարկան կանխագուշակում է նրա ապագա մասնագիտությունը:

## 4. Քոչարիի հիմքում ընկած ավանդույթը

Հայկական քոչարիի մասին շատերն են լսել, սակայն քչերը գիտեն, որ այդ պարի հիմքում ընկած է տարածաշրջանում գլխավոր կենդանիներից մեկի՝ խոյի պաշտամունքը:

Դեռ հեթանոսական ժամանակներում կար մի ծիսակատարություն՝ «վեր խոյանալ», որը ենթադրում էր հետևյալը. խոյի պես հետևի սմբակներին բարձրանալ և դրանցով ուժգին հարվածել գետնին: Պարի վերջում այդ շարժումներն են անում՝ կարծելով, որ այդկերպ փոխանցվում են այդ կենդանու խիզախությունը և ուժը:

## 5. Հայկական եկեղեցական տոները

Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով է նշում անշարժ տոները: Առաքելական Եկեղեցու հետևորդները Հայաստանում, ինչպես նաև դրա սահմաններից դուրս նշում են եկեղեցական ավանդույթները, որոնք դարերի ընթացքում միախառնվել են ժողովրդական տոներին: Յուրաքանչյուր նման ավանդույթ առանձնանում է յուրահատուկ սովորույթներով ու եզակի ճաշացանկով:

Այդ տոների շարքում են **Սուրբ Ծնունդն ու Հիսուսի Մկրտությունը**: Հայաստանում Սուրբ Ծնունդը նշում են հունվարի 6-ին, այդ օրը խաշած ձուկ ու չամիչով փլավ են մատուցում: Ժողովրդի ամենասիրված շարժական տոներից է **Սուրբ Զա-**

**տիկը** կամ Քրիստոսի Հարության տոնը: Այս օրը սեղանին մատուցում են ձուկ, ներկած ձու ու չամիչով փլավ, նաև մեծ քանակությամբ կանաչեղեն: Շարժական ու սիրված տոներից է **Վարդավառը:** Այդ օրն ընդունված է միմյանց վրա ջուր ցողել: Այս տոնն այսպես են նշում ոչ միայն Հայաստանում: Բացի այդ, հայերը մեծ հարգանքով են վերաբերվում ու նշում **Աստվածածնի վերափոխման** տոնն ու **Խաչվերացը:**

# ԿՆՈՋ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԻ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

## Հարցեր մտորելու համար

- Գիտե՞ք, թե կնոջ սոցիալական դերի վերաբերյալ ժամանակագրական առումով ինչ կարծիքներ կան:
- Ինչպիսի՞ ազդեցություն ունեն կարծրատիպերը հասարակությունների զարգացման գործում:

**Հոկտեմբերի 15-ը Գյուղի կանանց միջազգային օրն է:**

Գյուղի համակեցության կազմակերպման տեսանկյունից կարևոր է կնոջ դերը: Երեխաներին մեծացնելու համար կինը մշտական բնակության կարիք ուներ, և նույն վայրում երկար ժամանակ և կայուն բնակությունը կատարվում էր կնոջ նախա-

ձեռնությամբ: Առաջնային նշանակություն ունեցող պարագաները թե՛ գյուղերում և թե՛ քաղաքում ստեղծվել և պահպանվել են կնոջ շնորհիվ[10]:

Եգիպտական հիերոգլիֆներում քաղաքը նշանակող հիերոգլիֆը մայրական պաշտպանություն է խորհրդանշում: Գյուղը մարդկային գործունեության մի նոր տեսակ ձևավորեց. ի հայտ եկան ընտանիքներ, ընտանեկան ցեղեր, հարևաններ, ընտանի կենդանիներ և այլն:

Հայկական գյուղական համայնքներում տարածված են կարծրատիպային պատկերացումներ աղջիկների վարքագծի, հասարակական կյանքին նրանց մասնակցության և, առհասարակ, կնոջ դերի մասին, առ այն, որ «կինը պետք է լինի խոհանոցում»: Ճիշտ է՝ չենք կարող միանշանակ ասել, որ սա համընդհանուր բնույթ է կրում, բայց մեծամասնությունը կիսում է այս մոտեցումը:

Ինչպես փաստում է «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցը, հարցվածների 30,1%-ը նշում է, որ աշխատանքի հետ կապված ծրագրեր չունի, ընդ որում, աշխատանք չփնտրողների մեծ մասը կազմում են իգական սեռի ներկայացուցիչները: Գյուղերում ձևավորված կարծրատիպի համաձայն՝ ուսումն ավարտած աղջկա համար հաջորդ քայլը պետք է լինի ոչ թե աշխատանք գտնելն ու ինքնադրսևորվելը, այլ ամուսնությանը սպասելը: Գոյություն ունեն կարծրատիպային մոտեցումներ՝ կապված աղջիկների ամուսնության տարիքի հետ: Հասարակությունը և ծնողներն արդեն իրենք որոշել են, թե աղջկա ամուսնանալու տարիքը

10. Վերմիշյան Հ.Ռ., Բալասանյան Ս.Ս., Գրիգորյան Օ.Գ., Քերոբյան Ս.Ն. Լոկալ ինքնությունները Երևանում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 158 էջ + 1 էջ ներդիր:

երբ է, անկախ նրանից՝ աղջիկն ուզում է ամուսնանալ, թե ոչ: Այս դեպքում էլ կարևորում է, թե ո՞ւմ հետ է ամուսնանում՝ այն մարդու, ում հետ ուզում է կյանքը կապե՞լ, թե՞ մեկի, ով երաշխավորվել է հարևան, բարեկամի կողմից, կամ ում ընտրել են ծնողները:

Այս դեպքում աղջիկները իրենք իրենց կյանքի հանդեպ չունեն ոչ մի իշխանություն, և միանշանակ բացառվում է նրանց մասնակցությունը այլ, առավել ակտիվ ոլորտներում: Ընդունված սովորույթները իրենք են սահմանում աղջկա տեղը, դիրքը հասարակության մեջ, որը հիմնականում հենց ընտանիքում է. նախ սեփական ընտանիքում՝ ղեկավարվելով ծնողների, որոշ դեպքում՝ ավագ եղբոր կողմից, հետո անմիջապես անցում է կատարվում ամուսնական կյանքին, որտեղ կնոջ դերը էլ ավելի է սահմանափակվում՝ այս դեպքում արդեն ենթարկվելով ամուսնու և ամուսնու ընտանիքի մյուս անդամների կամքին:

Նման նախապաշարմունքներով առաջնորդվող հասարակության մեջ դժվար է խոսել աղջկա կամ կնոջ ակտիվության, համայնքային մակարդակում ինքնակազմակերպման, ինքնարտահայտման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որոշումների կայացմանը մասնակցելու մասին:

Ժամանակակից գյուղական ընտանիքների պարագայում լուրջ հիմնախնդիր է դարձել գենդերային դերերի վերասահմանումը: Այստեղ հաճախ գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «կնոջ «աշխատանքային պարտականությունների» շրջանը մեծացել է տղամարդու այդպիսի շրջանի փոքրացման պատճառով», որի հետևանքով «ավանդույթները մասնակիո-

րեն փոխվել են, սակայն պայմանավորված ոչ թե քաղաքացիական հասարակության՝ կնոջ և տղամարդու իրավահավասարության արժեքների յուրացումով, այլ սոցիալ-տնտեսական այս ծանր պայմաններում կնոջ դերի աճով»:

Պատճառը այն է, որ շատ գյուղերում տղամարդիկ տարվա մեծ մասը լինում են արտագնա աշխատանքի, ինչպես ընդունված է ասել՝ խոպանում, իսկ կինն այդ ընթացքում դառնում է տան տղամարդը: Որքան էլ Հայաստանում տիրապետող է նահապետական մտածողությունը, այնուամենայնիվ, շատ գյուղերում տղամարդիկ գրեթե չկան, բացակա են: Այստեղ հարց է առաջանում. ինչպե՞ս է այդ ընտանիքը գոյատևում, ինչպե՞ս է ապրում իր ամեն օրը:

Իրականում ամռան ամիսներին, երբ ամեն ինչ ավելի թեթև է, եղանակը՝ արևոտ, երեխաները խաղում են, կանայք՝ աշխատում: Իսկ ահա աշնանը սկսվում են սթրեսային իրավիճակները. կանայք ամեն վայրկյան սպասում են իրենց ամուսիններին, որովհետև չգիտեն, թե ե՞րբ են գալու և արդյո՞ք գալու են...

Շատ հետաքրքիր է այն պահը, երբ վերադառնում են ամուսինները: Կանայք միանգամից վերափոխվում են, դառնում առավել կանացի, սկսում են գիտակցել, որ կին են: Գյուղի կանայք ուժեղ են, քանի որ գյուղի տղամարդկանց բացակայության ժամանակ նրանք են կատարում բոլոր գործերը և գյուղը «կենդանի» պահում: Արդյունքում ստացվում է, որ Հայաստանում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվում են ավելի շատ կանայք՝ 56%, քան տղամարդիկ՝ 44 %:

Այստեղ տեղին է հիշել Հենրիկ Սենկևիչի կողմից հնչեցված «Աշխարհը պահում է իր ուսերի վրա ոչ թե Ատլանտը, այլ կինը...» արտահայտությունը, որն իր արդիականությունը չի կորցրել նաև այսօր:

Գյուղական համայնքներում առկա կարծրատիպային այլ մոտեցումներ են նկարագրված նաև այս ձեռնարկի 8-րդ մասում:

# ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ[11]

## Հարցեր մտորելու համար

- Ինչո՞ւ են մարդիկ գերադասում ապրել քաղաքներում:
- Ներքին և արտաքին միգրացիան թերությո՞ւն է, թե՞ առավելություն:

Վերջին տասնամյակներում Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական փոփոխությունների ֆոնին գյուղական համայնքները զերծ չմնացին սոցիալական արմատական փոփոխություններից:

Նախկին տնտեսական կարողությունների ոչնչացումն ուղեկցվում էր արհեստականորեն արագացված գյուղական բարեփոխումներով՝ հողի համատարած սեփականաշնորհմամբ և, այսպես կոչված, շուկայական հարաբերությունների ներթափանցմամբ: Դրա հետևանքով գյուղերում լայնորեն տարածվեց աղքատությունը: Աղետի գոտու գյուղական համայնքներին գումարվեցին Տավուշի, Վայոց ձորի և Սյունիքի սահմանամերձ գյուղերը, որտեղ Ադրբեջանի ռմբակոծություններից ևս մեծապես վնասվեցին ենթակառուցվածքները:

11. http://ysu.am/files/08A_Mkrtchyan-1577438858-.pdf

Ֆինանսական միջոցների սակավության պատճառով Հայաստանի գյուղական համայնքներից շատերում կրճատվեցին օգտագործվող ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը, փակվեցին վերամշակող ձեռնարկություններ:

Հայաստանում հողի սեփականաշնորհումը չստեղծեց կայուն զարգացման սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմաններ: Փոխվեց նաև ժամանակակից հայ գյուղացու սոցիալական ինքնաընկալումը: Եթե նախկինում հայ գյուղացին իր նույնականացումներում առավելապես ավանդապաշտ էր, աշխատասեր, օգնության ձեռք մեկնող, ապա այժմ նման բնութագրերն աստիճանաբար մղվում են հետին պլան: Հիմա կարևոր է, նույնիսկ ինչ-որ չափով պարտադիր է լինել նյութապես հաջողակ: Նախապատվությունը տրվում է սեփական ուժերին ապավինելուն և բացառապես ընտանիքի օգնությանը, համայնքի կարծիքը գնալով ավելի քիչ է կարևորվում, կտրուկ նվազել է մասնակցությունը գյուղի ընդհանուր խնդիրների լուծման գործընթացներին:

Հայ գյուղական համայնքային կյանքի նման փոխակերպումները հանգեցնում են միջանձնային հարաբերություններում փոխադարձ վստահության պակասի, որի հետևանքով թուլանում ու խաթարվում են համայնքային սոցիալական՝ նախկինում բավականաչափ ամուր կապերն ու վերահսկողությունը:

Հայաստանի գյուղերից՝
ՌԴ երկրամասեր

Նման իրավիճակում շատ գյուղացիներ ելք են փնտրում արտագաղթի մեջ: Նույնիսկ այն հանգամանքը, որ գյուղական համայնքներում վարձու աշխատողի ինստիտուտ ձևավորվեց, չնպաստեց նոր աշխատատեղերի ստեղծմանը: Գյուղատնտեսական վարձու աշխատանքը կայուն չէ, մարդիկ հեշտությամբ հրաժարվում են դրանից, մանավանդ եթե կա առավել նպաստավոր պայմաններով աշխատանքի հնարավորություն, այդ թվում՝ արտերկրում: Բանն այն է, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի ներկայիս պայմաններում ներքին աշխատաշուկան չի կարող մրցել աշխատանքային միգրացիայի տեսանկյունից հեշտ հասանելի երկրների հետ: Հետևաբար արտերկրում վարձու աշխատանքի համար առավել նպաստավոր պայմանները լուրջ խթան են ՀՀ համայնքներից աշխատանքային միգրացիոն հոսքերի ձևավորման համար:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ արտերկիր աշխատանքի են մեկնում առավելապես գյուղաբնակ տղամարդիկ: Հայաստանի գյուղերում վերարտադրողական տարիքի տղամարդիկ սեզոնային աշխատանքի են մեկնում արտերկիր գարնանը, վերադառնում աշնանը կամ ձմռան սկզբին:

Տարիների վիճակագրությունն է հուշում, որ սա բերում է միգրացիայի՝ ՀՀ գյուղերից դեպի ՌԴ տարբեր երկրամասեր: Արտերկիր աշխատանքի մեկնող տղամարդիկ հաճախ իրենց հետ ՌԴ ժամանակավոր բնակության են տեղափոխում նաև իրենց ընտանիքի անդամներին:




Գծապատկեր 1.
ՀՀ աշխատանքային ռեսուրսներն ըստ ՀՀ մարզերի, 2016 թ.

Հայաստանի համար միգրացիան և արտերկրից Հայաստան հարազատներին ուղարկվող դրամական տրանսֆերտները չափազանց մեծ դեր են ունեցել ոչ միայն առանձին տնային տնտեսությունների, այլև որոշ դեպքերում առանձին բնակավայրերի և տարածաշրջանների համար: Աշխատանքային միգրացիան օգնել է հաղթահարելու Հայաստանի ճգնաժամային տնտեսական անկումը՝ ապահովելով հազարավոր ընտանիքների ապրուստի միջոցը: Սակայն «միգրանտների կողմից ուղարկվող/բերվող փողը չի ներդրվում այնպիսի գործունեությունում, որը կարող է նպաստել երկարաժամկետ և

կայուն զարգացմանը: Դա նշանակում է, որ արտերկրում աշխատանքը դադարեցնելուց հետո մարդիկ կարող են բախվել աղքատությանը»:

Այսպիսով, քանի որ Հայաստանում գյուղական ընտանիքների կենսագործունեությունը շատ հաճախ կազմակերպվում է «ծայրահեղ պայմաններում», արտագնա աշխատանքը դիտվում է որպես խնդիրները լուծելու ռազմավարություն:

Սակայն արտագաղթը հանգեցնում է ավանդական ընտանիքների քայքայման, գլոբալ ընտանեկան ցանցերի ձևավորման և նոր սփյուռքի առաջացման: Այդպիսի գործընթացների շարունակականությունը ձևավորել է «արտագնա աշխատողի» սոցիալական տիպը, որի հարաբերակցությամբ են հաճախ որոշվում ներկայիս հայաստանյան գյուղական համայնքի սոցիալական կառուցվածքը և փոխակերպումների բնույթը, ընտանիքների կենսակերպի բովանդակությունը:

## Հետաքրքիր մտքեր...

Դժվար ապրուստի պատճառով նվազել է միմյանց տուն հյուր գնալու հաճախականությունը, շուկայական հողաբաժանման հետևանքով շատացել են հարևանների վեճերը: Ինչպես նշում է Վահե Սահակյանը, «ճգնաժամային պայմաններում բոլորը սկսեցին մտածել, թե ինչպես անեն, որ կարողանան ապրել գոնե դիմացինից լավ: Դա իր հետ բերեց մրցակցություն և որոշակի թշնամություն, ինչի արդյունքում հարևանական կապերը թուլացան»: Այս ամենին պետք է գումարել գյուղացիների մշակութային կապիտալի կազմալուծումը, որը

հանգեցրել է աշխատուժի որակազրկման, գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության անկման, հետևաբար նաև՝ ֆինանսական կապիտալի չափերի նվազման և յուրօրինակ արատավոր երևույթների առաջացման:

# ՈՒՐԲԱՆԻԶԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ[12]

### Հարցեր մտորելու համար

- Գիտե՞ք, թե որ երկրներում է գյուղից քաղաք տեղափոխման՝ ուրբանիզացման մակարդակը ավելի բարձր:
- Ո՞րն է քաղաքների ծանրաբեռնվածության թոթափման լավագույն եղանակը:

**Ուրբանիզացումը** պատմական գործընթաց է, որին բնորոշ են քաղաքային բնակավայրերի աճը, քաղաքային բնակչության տեսակարար կշռի մեծացումը բնակչության ընդհանուր թվաքանակում, քաղաքների դերի մեծացումը և քաղաքային ապրելակերպի տարածումը:

Համաշխարհային փորձը հուշում է, որ զարգացող երկրներին բնորոշ երևույթ է ուրբանիզացիան, երբ գյուղաբնակ բնակչությունը շարժվում է դեպի քաղաքներ՝ ձգտելով ավելի որակյալ կյանքի, լավ աշխատանքի և առավել բարձրորակ սպասարկման: Հայաստանի ազգաբնակչությունը ևս, կարելի է ասել, այս առումով բացառություն չէ:

12. Մկրտիչյան Ա.Ե., Շահնազարյան Գ.Ն., Սահակյան Ա.Կ., Վարտիկյան Ա.Ռ., Վերմիշյան Հ.Ռ. Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Կոլեկտիվ մենագրություն/- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:

Հայաստանում քաղաքային բնակչությունը 28%-ով գերազանցում է գյուղական բնակչությանը: Եթե 2016 թ. գյուղական բնակչության թիվը կազմում էր 36%, ապա քաղաքային բնակչության թիվը հասնում էր 64%-ի: Հայաստանում ուրբանիզացման բավականին բարձր մակարդակը զարգացման ցուցանիշ լինելու հետ մեկտեղ կարող է նաև գյուղական շրջանների նոսրացման առիթ դառնալ:

Քաղաքակենտրոնացման գլխավոր շարժառիթը աշխատաշուկայի պակասն է: Եվ եթե նախկինում գյուղերում այդ բացը լրացնելու համար ստեղծվում էին տարբեր գործարանների մասնաճյուղեր, ապա այսօր դրանք այլևս չկան: Բացի այդ, շատ կարևոր է երկու փաստ՝ գյուղատնտեսական ապրանքների ծավալների նվազումը և զուգահեռ արտաքին առևտրաշրջանառության ծավալների աճը: Գյուղատնտեսական ապրանքների ծավալների շարունակական նվազումը խոսում է այն մասին, որ գյուղատնտեսությամբ զբաղվելը Հայաստանի գյուղական համայնքներում դառնում է ոչ եկամտաբեր:

«Այս պարագայում 8-հոգանոց ընտանիքի բոլոր անդամները չեն կարող գյուղատնտեսությամբ ու այգեգործությամբ զբաղվել, և նրանցից մի քանիսը գալիս են այնտեղ, ուր աշխատանք կա»,- հավաստիացնում է սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը: Նրա համոզմամբ՝ աշխատատեղերի պակասն ազդում է ոչ միայն քաղաքաբնակների, այլև գյուղաբնակների վրա, և գյուղից քաղաք տեղափոխվելու և այնտեղ մշտական բնակություն հաստատելու հիմնական պատճառը հենց դա է[13]:

Կան նաև այլ պատճառներ: Հետաքրքրական է, որ չնայած գյուղերում փաստացի առկա ուսումնական հաստատությունները գերակշռում են, գյուղաբնակների մեծ մասը ձգտում է քաղաքներում սովորելու և հետագայում նաև այնտեղ մշտական բնակություն հաստատելու:

Սկզբում մարզերից դեպի քաղաք երիտասարդների հոսքի հիմնական առիթը մասնագիտություն ստանալն է լինում, բայց տեղափոխվելուց ընդամենը մի քանի տարի անց քաղաքի հետ կապեր հաստատելու առիթը որոշակի փոփոխության է ենթարկվում: Քաղաքում բնակվելու հիմնական դրդապատճառը հնարավորություններն են՝ հաց վաստակելուց մինչև աշխարհը կառավարելու հմտություններ. «Քաղաքում առավելագույն չափով բավարարվում են անձի հիմնական կարիքները: Նա ստանում է կրթություն, ունենում աշխատանք և հարմարավետ կյանք: Այսպիսով՝ քաղաքն արտացոլում է քաղաքակրթության զարգացումը» (հոգեբան Հայկուհի Հարությունյան):

13. https://www.aravot.am/2017/03/20/867965/

Քանի որ համալիր ավտոմատացման գործընթացը «եփվում» է հենց քաղաքներում, կարելի է արդարացնել քաղաքակենտրոնացման լայն թափը, որ հատուկ է զարգացող երկրներին: Այս դեպքում կյանքի հնարավորինս բարվոք պայմաններն ու նորաշեն կառույցների փայլը կուրացնում կամ գուցեև հնարավորինս բարեկեցիկ և ապահով կյանքի իրական հեռանկար են խոստանում գյուղերում բնակվողների համար:

Այս դեպքում ընտանիքը պահելու միակ միջոցը քաղաքում աշխատանք գտնելն է: Գումարի անհրաժեշտությունը հատկապես կարևոր է դառնում երեխայի դպրոց գնալուն պես, երբ ընտանիքի ծախսերը կտրուկ ավելանում են, հարկավոր է գիրք, հագուստ և այլ անհրաժեշտ պարագաներ գնել: «Գյուղի խնդիրը գումարն է. կաթ ունեն, միրգ, կարտոֆիլ, կաղամբ ունեն, բայց չեն կարողանում վաճառել, իսկ դա բավականին խնդրահարույց է: Եվ այս պարագայում քաղաքում աշխատելը դրամական միջոցների լավ աղբյուր է»: Ի վերջո, հաշվի առնելով այն փաստը, որ թույլ զարգացած երկրներում ուրբանիզացման մակարդակը ցածր է 30%-ից, իսկ զարգացած երկրներում գերազանցում է 70%-ը, կարող ենք հավաստել, որ ՀՀ-ն ուրբանիզացման 64% մակարդակով դասվում է զարգացող երկրների շարքին և միտում ունի համալրելու զարգացած երկրների ցուցակը:

# ԱՌՈՂՋ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ. COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ

## Հարցեր մտորելու համար

- Որո՞նք են ժամանակակից մարտահրավերները գյուղական հասարակության կայուն կյանքի համար:
- Ինչպե՞ս են գյուղատնտեսությունը և գյուղի գոյությունը կանխարգելում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Շրջակա միջավայրի աղտոտվածությունը ժամանակակից մարդու առջև ծառացած գերխնդիրներից է, և մարդն առանց մաքուր և անվտանգ շրջակա միջավայրի անկարող է շարունակել իր գոյությունը: Այդ իսկ պատճառով վերջին տասնամյակներում առողջ ու անվտանգ շրջակա միջավայր ունենալը միջազգային շրջանակների կողմից ճանաչվել է որպես մարդկային իրավունք: Անտարակույս մարդու իրավունքները և շրջակա միջավայրը՝ որպես գիտական, քաղաքական ու իրավական շրջանակների ուշադրության սևեռակետում գտնվող հարցեր, մեծ նշանակություն ունեն նաև բոլորի համար, որովհետև ՄԱԿ-ի հռչակագրի համաձայն՝ մաքուր շրջակա միջավայր ունենալը մարդու գլխավոր իրավունքներից է համարվում:

Բոլորն ունեն ապրելու իրավունք, և դա համարվում է մարդու իրավունքների ամենանախնական իրավունքը, և այդ իրավունքը ունենալու դեպքում միայն կարելի է խոսել մյուս իրավունքների մասին: Իհարկե պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ ուղղակի կապ գոյություն ունի այս իրավունքի և շրջակա միջավայրը կազմող տարրերի միջև: Ուստի կարևորվում է առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը, և ոչ ոք իրավունք չունի ինչ-որ կերպ աղտոտելով ջուրը, օդը և հողը՝ աղտոտել մարդկանց ապրելու տարածքը:

Մարդու պարտականությունն է պահպանել շրջակա միջավայրը ներկա և գալիք սերունդների համար[14]:

Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքի շրջանակում մարդիկ և մարդկային հասարակություններն իրավունք ունեն օգտվել բնապահպանական տեսանկյունից հավասարակշիռ և տնտեսական, մշակութային, սոցիալական ու իրավական զարգացման համար նպաստավոր շրջակա միջավայրից, և պետությունները չպետք է անբարենպաստ փոփոխություններ առաջացնեն ապրելու պայմանների մեջ, այնպես, որ վտանգվեն շրջակա միջավայրն ու մարդկանց առողջությունը: Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը չորս մասերից է բաղկացած: Առաջինը՝ բնապահպանական որոշումներում քաղաքացիների մասնակցության իրավունքն է, երկրորդը՝ բնապահպանական տեղեկություններին հասանելիության իրավունքը, երրորդը՝ բնապահպանական թեմայով ուսուցումների իրավունքը, իսկ վերջինը՝ զարգացման իրավունքը:

14. https://parstoday.com/hy/radio/programs-i33415

Տնտեսական զարգացումը կայուն չլինելու և բնապահպանական հիմնահարցերը չներառելու դեպքում ոչ միայն զարգացման չի հանգեցնելու, այլև մեծ ծախսեր է պատճառելու պետություններին: Այդ ծախսերը չնչին են թվում մարդկանց կյանքին սպառնացող առողջապահական խնդիրների համեմատությամբ: Օրինակ՝ նախկին խորհրդային Միությունը գյուղատնտեսության զարգացման և բամբակի դաշտերը ոռոգելու համար Արալյան լիճը սնուցող գետերի վրա բազմաթիվ ամբարտակներ կառուցելով, այդ լճի ցամաքելու պատճառ դարձավ, և այդպիսով տեղի ունեցավ Չեռնոբիլի աղետից հետո ժամանակի երկրորդ կենսաբանական խոշոր աղետը: Բնապահպանական այդ աղետը վտանգեց տարածաշրջանի ժողովրդի առողջությունն ու կյանքը, և հազարավոր մարդիկ մահացան լճի ցամաքելու հետևանքով առաջացած աղի փոթորիկների պատճառով: Այդպիսով մարդիկ զրկվեցին առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքից: Ուստի կարելի է ասել, որ ամուր կապ գոյություն ունի կայուն զարգացման և մարդու իրավունքների հարգման միջև, և ոչ կայուն զարգացումը կարող է մարդու իրավունքների բացահայտ խախտման հանգեցնել: Ուստի առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը պայմանավորված է կայուն զարգացմամբ: Այդ իսկ պատճառով տնտեսական զարգացման ծրագրերում պետք է այնպիսի քաղաքականություններ որդեգրել, որոնք հիմնված են մարդու իրավունքների հարգման և շրջակա միջավայրի պահպանության վրա: Այդ թեման ընդգծվել է նաև 1992 թ. կայացած Ռիո դե Ժանեյրոյի համաժողովում: Այդ հայտարարության մեջ ասված է. «Զարգացումը պետք է այնպես

լինի, որ ապահովվեն ներկա և գալիք սերունդների շրջակա միջավայրի զարգացման հետ առնչվող կարիքները»:

Շրջակա միջավայրի հետ կապված օրենքները գործնական են այն ժամանակ, երբ անառողջ ու վտանգավոր գործունեություն տեղի չունենա, չաղտոտվեն օդն ու ջուրը, և թափոններ չլցվեն լեռներում, ծովերում ու օվկիանոսներում, և համագործակցություն ծավալվի ժողովուրդների ու պետությունների միջև[15]:

## COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ[16]

2019 թվականի դեկտեմբերի 31-ին Չինաստանում գրանցվեց նոր տեսակի կորոնավիրուսային վարակ, որը կարճ ժամանակահատվածում տարածվեց ողջ աշխարհով մեկ՝ ազդելով բոլորիս կյանքի վրա: Վարակի արագ տարածումը և մարդկությանը դեռևս հայտնի չլինելու փաստը հանգեցրին տարատեսակ տեղեկատվության առաջացման և տարածման:

Կորոնավիրուսը պատկանում է այն վիրուսների խմբին, որոնք առաջացնում են տարատեսակ հիվանդություններ՝ սկսած սովորական հարբուխից մինչև ավելի ծանր հիվանդություններ, ինչպիսիք են՝ Մերձավոր Արևելքի շնչառական համախտանիշը (MERS-CoV) և ծանր սուր շնչառական համախտանիշը (SARS-CoV):

15. http://www.fao.org/3/aq670hy/aq670hy.pdf

16. https://www.un.am/hy/p/coronavirus-or-covid-19

Պարզվել է, որ Հայաստանի գյուղաբնակ ընտանիքներն ավելի արդյունավետ են հաղթահարում COVID-19 համավարակով պայմանավորված վիճակը և ավելի հավասարակշռված սննդակարգ ունեն:

2020 թ. ապրիլի 7-10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ի Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են գյուղաբնակ ընտանիքների հեռախոսային հարցումներ, որի ժամանակ նրանք պատասխանել են իրենց առողջական վիճակի, զբաղվածության և գյուղատնտեսական աշխատանքների, պարենի սպառման և մատչելիության վրա արտակարգ դրության ազդեցության, ինչպես նաև՝ շուկայի իրավիճակի, մասնավորապես՝ դրա հասանելիության և գնային փոփոխությունների վերաբերյալ հարցերին:

Հարցմանը մասնակցած բոլոր տնային տնտեսությունները նշել են, որ սկսել են իրենց տնամերձ այգիները և (կամ) վարելահողերը մշակել: Նրանք նշել են, որ կա սերմացուի և պարարտանյութերի ձեռքբերման խնդիր, ինչը կապված է ֆինանսական միջոցների սղության կամ բացակայության հետ:

Հարցման ընթացքում մասնակիցները չեն առանձնացրել պարենի առկայության հետ կապված խնդիրներ: Նրանք հիմնականում օգտագործում են ձմռան համար մառանում պահեստավորված մթերքը, ինչպես, օրինակ՝ տնային պայմաններում պատրաստված պահածոները, սեփական մշակության միրգ-բանջարեղենը (կարտոֆիլ, կաղամբ, լոբի, ոսպ)[17]:

17. http://un.am/hy/news/962

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## Հարցեր մտորելու համար

- Ինչո՞ւ է անհրաժեշտ կայուն զարգացումը գյուղական կյանքի լավացման գործում:

Գյուղատնտեսությունը՝ որպես տնտեսության ճյուղ և կյանքի բնագավառ, ունի օբյեկտիվ անկատարություն. այն ցրված է տարածության և խտացված՝ ժամանակի մեջ: Գյուղատնտեսության մեկ այլ առանձնահատկությանը՝ բարոյականությանը, դեռ 2200 տարի առաջ անդրադարձել է Կատոնը՝ սկսելով երկրագործության մասին իր աշխատությունը տարբեր զբաղմունքի մարդկանց համեմատական վերլուծությունով և գտնելով, որ «ամենամաքուրը, ազնիվը, հավատարիմը նրանցից, բայց և ամենաքիչ եկամուտ ստացողը» գյուղատնտեսությամբ զբաղվողն է:

Անկախ իր զարգացածությունից, գյուղատնտեսությունը ցանկացած երկրում համարվում է բնակչությանը պարենամթերքով ապահովման առաջնային ճյուղերից մեկը, և այդ պատճառով այս ոլորտի զարգացումն ու հետևողական աշխատանքների իրականացումը շատ մեծ կարևորություն ունեն:

Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականաշնորհումից և փոքր գյուղական ագարակների կազմավորումից հետո տեղի ունեցավ ոչ գյուղատնտեսական աշխատուժի զգալի տոկոսային հարաբերակցության տեղափոխություն դեպի գյուղատնտեսական գործունեություն: Շատ տնային տնտեսությունների համար դա անցումային շրջանից հետո դժվարությունները հաղթահարելու հիմնական ռազմավարությունն էր: Արդյունքում՝ գյուղատնտեսության մեջ կրկնակի մեծացավ զբաղվածությունը՝ համեմատած մինչև բարեփոխումները ընկած ժամանակահատվածի հետ:

Գյուղատնտեսության աճի տեմպերը անցած տասնամյակի ընթացքում զգալիորեն տատանվել են: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունը պահպանել է իր առանցքային նշանակությունը զբաղվածության և գյուղական բնակչության եկամուտների, ինչպես նաև տեղական սննդամթերքի մատակարարման մասով:

Պետական վիճակագրական տվյալների համաձայն՝ ներկայումս հողերի 32 տոկոսը չի օգտագործվում հետևյալ պատճառներով՝ դրանք մոտ են գտնվում Հայաստան-Ադրբեջան սահմանի վտանգավոր կամ ականապատված գոտիներին, որոշ վարելահողեր հեռու են բնակավայրերից կամ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար չափազանց փոքր են, ինչպես նաև առկա են ոռոգման խնդիրներ:

Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ աշխատանք կլանող ամենամեծ հատվածը: Պաշտոնական տվյալների համաձայն՝ երկրում աշխատանք ունեցող բնակչության մոտ 45 տոկոսը զբաղված է գյուղատնտեսության մեջ:

Չնայած գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալ դերի և գյուղական զարգացման նշանակության գիտակցմանը՝ գյուղական համայնքներում տիրող իրավիճակն իրականում հեռու է կատարյալ լինելուց: Անհրաժեշտ է ընդլայնել գյուղական համայնքների հնարավորությունները՝ հզորացնելով տեղական ինքնակառավարման կարողությունները և խթանելով տեղական համայնքների մասնակցությունը գյուղական զարգացման գործունեությանը: Պետք է իրագործել պահանջարկի վրա հիմնված գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը և բերքահավաքին հաջորդող ծրագրերը, նաև ավելի բազմազան դարձնել գյուղական համայնքների գործունեությունը, զբաղվածության հնարավորությունները և շուկաների մատչելիությունը: Ավելի հասկանալի դարձնել կլիմայական փոփոխություններին արձագանքելու և բնական պաշարների կառավարման հնարավորությունները՝ համապատասխան և հաջող փորձի վրա հիմնված հատուկ տարածաշրջանային և համայնքային ծրագրերի մշակման միջոցով: Զարգացման գործընթացում պետք է հաշվի առնվեն և՛ քանակական, և՛ որակական արդյունքները:

Ներկայումս գյուղական վայրերում կյանքի բարելավմանը միտված գործունեության ծավալման և իրականացման համար միջոցների անբավարարությունը մարդկանց դրդում է լքել գյուղերը, ինչի արդյունքում գյուղական վայրերում աճում է աշխատուժի արժեքը, քանի որ տնտեսապես ավելի ակտիվները հեռանում են՝ կյանքի ավելի բարենպաստ պայմաններ գտնելու: Այստեղ լուրջ խնդիր է նաև տղամարդ աշխատողների սեզոնային միգրացիան դեպի ԱՊՀ այլ երկրներ՝

արտագնա աշխատանքի փնտրտուքով: Տղամարդկանց միգրացիայի արդյունքում Հայաստանի տնային տնտեսությունների մեկ երրորդը ղեկավարում են կանայք, դրա ավելացման միտումը նկատելի է հատկապես երկրի գյուղական բնակավայրերում: Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններն ամենաաղքատն են:

Կարևոր խնդիրներից մեկն այն է, որ այժմ հանրապետության բնակչության մոտ կեսը զբաղված է գյուղատնտեսությունում: Սակայն դա անբնական է, քանի որ դժվար թե բոլորը ֆերմերներ են: Բայց ծայր առած հողի վաճառքը զարգացում չի ապրում նաև այն պատճառով, որ անգամ ինքն իրեն ֆերմեր չճանաչող գյուղացին մնում է հողին կառչած՝ այլ աշխատատեղ չունենալու պատճառով որպես գոյության պահպանման միակ միջոցի:

Հատված «Ինչպես զարգացնել գյուղական համայնքները կրթության, տնտեսության ու... ծառի վրայի փայտե տնակի միջոցով». Դեբեդ համայնքում անցկացվող համաժողովից

# ԱՎԱՆԴՈՒՅԹՆ ՈՒ ԿԱՐԾՐԱՏԻՊԸ՝ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ[18]

## Հարցեր մտորելու համար

- Ինչպե՞ս են գյուղական համայնքներում իշխող կարծրատիպերը խոչընդոտում կյանքի բնականոն ընթացքը:

Գյուղը դարեր շարունակ եղել է ավանդույթների կրողն ու սերունդներին փոխանցողը: Չնայած ավանդույթները ազգի մշակութային արժեքների մեջ են մտնում և կարևոր առանձնահատկություն են, սակայն հաճախ դրանք վերածվում են կամ ծնում են կարծրատիպեր, որոնք այս կամ այն կերպ խոչընդոտում են մարդկանց ինքնարտահայտմանն ու ինքնիրացմանը: Կարծրատիպային մոտեցումները շատ տարբեր են թե՛ երիտասարդության, թե՛ մեծահասակների մոտ, որոնցից շատերը ոչ միայն չեն փորձում երիտասարդների ինքնարտահայտումը, ինքնակազմակերպումը խթանել, այլև հակառակը՝ կաշկանդում են անգամ իրենց երեխաներին՝ առաջ քաշելով տարբեր կարծրատիպային մոտեցումներ:

Գյուղական երիտասարդության շրջանում տարածված կարծրատիպերը հիմնականում կապված են գենդերային հիմքի վրա դերային բաշխման հետ, որտեղ հասարակությունն

18. http://escs.am/files/files/2019-08-30/a93515e62795e8a9e8c33473ded7aed1.pdf

ինքը ստեղծել է առանձին դերեր աղջիկների և տղաների համար, որոնց չկատարումը դիտարկվում է որպես ոչ ընդունելի: Այսպես ասած, չընդունված լինելու վախը երիտասարդությանը ստիպում է ուղղակի չարտահայտվել, չնախաձեռնել ու չկազմակերպել ինչ-որ բան կամ մասնակցել այս կամ այն միջոցառմանը, որոնք չեն համապատասխանում հասարակության կողմից դերային բաշխմանը: «Գյուղական համայնքների երիտասարդները առավել պասիվ են և ամաչկոտ, նկատելի է ինքնավստահության պակաս: Սա պայմանավորված է գյուղի ավանդույթներով, ինչպես նաև տարբեր մարդկանց հետ շփվելու, մշակութային կյանքին մասնակցելու պակաս հնարավորություններով»,- նշում է փորձագետը:

Կարող ենք փաստել նաև, որ ընտանեկան դաստիարակությունը նույնպես մեծ դեր ունի երիտասարդության ինքնավստահության պակասի մեջ: Երիտասարդը, որը մշտապես ծնողների հսկողության տակ է և նաև ֆինանսապես է կախված ծնողներից, ինքնաբերաբար կորցնում է իր ինքնուրույնությունը և ինքնադրսևորվելու հնարավորությունը, ինչն էլ հանգեցնում է անվստահության սեփական ուժերի նկատմամբ:

Շատ դեպքերում կարծրատիպերը իրավագիտակից և նախաձեռնող երիտասարդների մոտ հանգեցնում են հիասթափությունների և սեփական ուժերի հանդեպ թերահավատության: Որքան գյուղական համայնքը փոքր է, այնքան ավելի մեծ է կարծրատիպերի ազդեցությունը երիտասարդության վրա, քանզի այստեղ մեծ դերակատարում ունեն նաև մարդկային հարաբերությունները: Բոլորը բոլորին ճանաչում են, և

եթե որևէ երիտասարդ չի համապատասխանում կարծրացած դերային սպասումներին, դա տեղիք է տալիս ամբողջ համայնքում տարաբնույթ քննարկումների, ինչպես նաև տարբեր տեսակի որակումների, որոնք երիտասարդին ի վերջո հասցնում են հիասթափության:

Գյուղական համայնքներում տարածված կարծրատիպերը մեծ հոգեբանական ազդեցություն են ունենում և՛ աղջիկների, և՛ տղաների վրա: Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում երիտասարդները հաստատում են, որ տղաների հանդեպ կարծրատիպերը հաճախ ավելի խիստ են, քան աղջիկների: Փորձագետն իր հերթին նշում է, որ նման կարծրատիպերի պատճառով տղաները հատկապես տուժում են մշակութային կյանքին մասնակցություն ունենալու հարցում. «Շատ համայնքներում տղաները դուրս են մնում մշակութային կյանքին մասնակցությունից: Օրինակ՝ գյուղական համայնքներում պարի խմբակներում աղջիկները պարում են այն պարը, որը, որպես կանոն, պետք է տղան պարի, քանի որ պարի խմբակներում տղաներ չկան»:

Ըստ երիտասարդների և փորձագետների՝ գենդերային կարծրատիպերը մեծապես պայմանավորում են սեռերի միջև փոխհարաբերությունները[19]: Դրանք պարզապես բացառում են կամ մաքսիմալ սահմանում են տարբեր սեռերի փոխհարաբերությունները: Այստեղ խոսքը գենդերային պատկերացումների և ընկալումների մասին է: Գոյություն ունեցող գենդերային կարծրատիպը սահմանում է՝ աղջիկը չպիտի լինի տղաների շրջապատում, իսկ տղան՝ աղջիկների: Արդյունքում

19. https://asue.am/amberd/publication/analytics/ra-government-for-2019-2023-spring-agricultural-policy-brief-analysis

մեծանում են մեկուսացումն ու կաշկանդվածությունը սեռերի միջև: Փորձագետներից մեկը, խոսելով այս մասին իր փորձից, օրինակ է բերում. «Դեպք է եղել, երբ գյուղ մեքենա ենք ուղարկել երիտասարդներին դասընթացի վայր հասցնելու համար, աղջիկները հետաքրքրվում էին, թե ովքեր են լինելու մեքենայի մեջ, որպեսզի հանկարծ տղաների հետ ճանապարհ չգնան»: Նման պարագայում խնդիրը ոչ միայն գենդերային կարծրատիպերի մեջ է, որոնք առաջացնում են բևեռացում սեռերի միջև, այլ նաև պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նմանատիպ կարծրատիպերը խարխլում են համայնքում, գյուղում երիտասարդների միասնությունը և սահմանափակում նրանց համատեղ աշխատանքի հնարավորությունները: Այս մոտեցումը ոչ միայն պարտադրված է հասարակության կողմից, այլև արմատացած է երիտասարդության մեջ, ովքեր վերարտադրելու են այն իրենց երեխաների միջոցով:

Շատ երիտասարդներ կարծրատիպերը խնդիր չեն համարում և գտնում են, որ դրանք իրենց առօրյայի ու կենցաղի մասն են կազմում: Հատկանշական է, որ հարցմանը մասնակցած երիտասարդների միայն 11%-ն է հասարակության պահպանողականությունն ու ձևավորված կարծրատիպերը համարում երիտասարդների համար խնդիր:

Փորձագետների շրջանում նույնպես հակասական կարծիքներ կան՝ կապված ավանդույթների ու կարծրատիպերի հետ: Նրանցից մեկը նշում է. «Չեմ կարող ասել, որ չափավոր ավանդապաշտությունը կարող է խնդիրների հանգեցնել: Եթե երիտասարդը ավանդապաշտ է և հարգում է իր պապից

ու տատից եկած դաստիարակությունը, ես այդ երիտասարդի մեջ խնդիր չեմ տեսնում»: Միևնույն ժամանակ փորձագետը հնարավոր է համարում ավանդապահ երիտասարդի համար խնդիրների առաջացում մարդկային փոխհարաբերություններում՝ ընդգծելով. «Միգուցե ժամանակի ընթացքում հաղորդակցման մեջ խնդիրներ առաջանան, քանզի օր օրի ամեն ինչ զարգանում է, և մարդկայինը հարաբերությունները փոխակերպվում են, սակայն միաժամանակ չենք կարող ասել, որ բոլոր փոխակերպումներն են հանգեցնում լավ բանի: Չնայած փորձագետների կողմից առաջ քաշված պահպանողական գաղափարների՝ նրանք նույնպես դեմ են ցանկացած տեսակի սահմանափակումների երիտասարդության նկատմամբ՝ ծնողների և հասարակության կողմից:

Անդրադառնալով երիտասարդների հասարակական գործունեությունը խոչընդոտող կարծրատիպերին՝ փորձագետը նշում է. «Ես դեմ եմ, երբ ծնողն արգելում է երեխային զբաղվել հասարակական գործունեությամբ: Մարդը, եթե ապրում է միայն իր համար և հասարակությանը չի պատկանում, այդ մարդը պիտանի չէ: Նա պիտանի կարող է լինել իր տանը կամ ընկերական շրջապատում»:

Ավանդույթների և ազգային արժեքների պահպանումը իհարկե պետք է համարվի երիտասարդների կարևորագույն առաքելություններից, քանի որ երիտասարդները ազգային արժեքների պահպանողներն ու փոխանցողներն են հաջորդ սերունդներին: Սակայն հաճախ ազգային արժեքներ ասվածի մեջ մենք սխալմամբ նաև ներառում ենք այն բոլոր կարծրատիպային երևույթները, որոնք թեև ձևավորվել են

նույն հասարակության մեջ, սակայն չեն կարող դասվել ազգային արժեքների ու ավանդույթների թվին: Ինչպես նշում է փորձագետը, «Երիտասարդները պետք է լինեն իրենց ավանդույթների կրողը, բայց չսահմանափակեն իրենց ու զբաղվեն հասարակական աշխատանքով»: Կարծրատիպերը սահմանափակում են երիտասարդների հասարակական գործունեությունն ու պատնեշ հանդիսանում նրանց կյանքի ակտիվացման, հասարակական ներգրավվածության, ինքնակազմակերպման ու զբաղվածության ապահովման համար»:

## «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ»՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ[20]

**Հարց մտորելու համար՝**

- Որո՞նք են գյուղական հասարակության կայուն զարգացմանը նպաստող հիմնական ուղիները:

Այսօրվա 14-29 տարեկան երիտասարդները մեծացել են Խորհրդային Միության փլուզումից հետո՝ անկախ Հայաստանում, նրանք ***«անկախության սերունդ» են***: Այս իմաստով այս սերունդը ներկայացնողն է մի կողմից՝ խորհրդային ժառանգության և մյուս կողմից՝ հայաստանյան հասարակության հետագա զարգացման:

Խորհրդային շատ երկրների պես, Հայաստանը նույնպես դեռևս գտնվում է անցումային շրջանում: Հայաստանը, լինելով տարածաշրջանում ամենափոքր հանրապետությունը, դեռևս փորձում է շատ հարցերի հետ մեկտեղ նաև իր ուղին գտնել արժեքների, ինտեգրացիոն մոդուլների և դրանց առնչվող անվտանգային գործոնների միջև: Ժողովրդավարական հասարակության և ազատ շուկայական տնտեսության տրանսֆորմացիան հեռու է ավարտված համարվելուց: Ի հավելումն այդ ամենին՝ երկիրն ունի հարևանների հետ տևական վեճեր, որոնք հանգեցնում են մեկուսացման, ինչպես նաև «ոչ պա-

20. Անկախության սերունդ: Հետազոտություն երիտասարդների շրջանում: Հայաստան 2016: Եր., 232 էջ:

տերազմ - ոչ խաղաղություն» իրավիճակի: Այս առումով մտահոգիչ են Հայաստանի երիտասարդության մտահոգությունները, ձգտումները, արժեքները և կենսակերպը:

Այնուամենայնիվ, շատ երիտասարդներ լավատես են ապագայի նկատմամբ:

Հարցումները, որոնք անցկացվել են ողջ երկրում՝ 18-ից բարձր 1200 բնակիչների հետ դեմառդեմ հարցազրույցներով, տվել են հետևյալ պատկերը[21]:

**Ինչպիսի՞ տրամադրություններ են գերիշխում Հայաստանում:** Հարցվածների 69 տոկոսը լավ ապագայի հույս ունի, 20 տոկոսը այնքան էլ լավատես չէ, իսկ 7 տոկոսը հիասթափված է, անհանգիստ ու ապագայի հանդեպ վախով:

***Ի՞նչն է ամենաշատն անհանգստացնում հարցվածներին:*** Պատերազմը, արցախյան հակամարտությունը:

***Համայնքային խնդիրներից*** առաջին պատվավոր տեղում աղբն է, ապա՝ գործազրկությունը, ճանապարհների ու տրանսպորտի վիճակը:

Այսպիսով, դեռևս կա երիտասարդների մի հատված, որը հավատում է ժողովրդավարությանը և ազատական հասարակությանը և պատրաստ է պարտավորություն ստանձնել այդ հարցում: Դիտարկելով Հայաստանում տեղ գտած վերջին զարգացումները՝ այս խումբն ավելի ու ավելի հասանելի է դառնում: Նրանց դրդապատճառները և հաջողությունները որոշ հարցերի վերաբերյալ հուսադրում են, որ հայաստանյան երիտասարդները կարող են վերջապես դառնալ փոփոխության դերակատարներ:

21. https://asue.am/amberd/publication/analytics/ra-government-for-2019-2023-spring-agricultural-policy-brief-analysis

# ՔՈՒԻԶԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| հարց 1 | դ | հարց 7 | դ |
| հարց 2 | ա | հարց 8 | դ |
| հարց 3 | գ | հարց 9 | բ |
| հարց 4 | բ | հարց 10 | դ |
| հարց 5 | գ | հարց 11 | ա |
| հարց 6 | բ | հարց 12 | ա |

ISBN 978-9939-9185-9-4

Ձեռնարկը նախատեսված է տնտեսական բաժնի ուսանողների և ձեռնարկատերերի համար: Այն ստեղծված է տեսական և գործնական նյութերի հիման վրա և նպատակ ունի տրամադրել ընթերցողին հիմնական գիտելիքներ՝ համաշխարհային տնտեսության մեջ կատարվող կայուն փոփոխությունների ժամանակակից ընթացքի մասին: Ձեռնարկը պատրաստելու համար կիրառվել են միջազգային հարթակում հրատարակված ամենավերջին գիտական հոդվածներ, որոնց հղումները ևս տրամադրված են ձեռնարկում:

Երևան 2021